«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2017 թվականի

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները»** հարցը (զեկուցող՝ պրոռեկտոր Մ.Ն.Հարությունյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանի պահանջներին համապատասխան: 2016-2017 ուսումնական տարում համալսարանն ունեցել է առկա ուսուցման բակալավրիատի 840 (նախորդ տարվա 1223-ի փոխարեն), հեռակա ուսուցման բակալավրիատի 445 (նախորդ տարվա 255-ի փոխարեն) և առկա ուսուցման մագիստրատուրայի 264 (նախորդ տարվա 439-ի փոխարեն) շրջանավարտներ, որոնց համար կազմակերպվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններ: Ռեկտորատը, ուսումնական բաժինը, դեկանատները և ամբիոնները բավական աշխատանք են կատարել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպումը պատշաճ մակարդակով իրականացնելու և նախորդ տարիներին նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ: Այդ նպատակով ժամանակին ձևավորվել են 24 մասնագիտական հանձնաժողովներ ՀՊՏՀ-ում, 2-ը՝ Գյումրու, 2-ը՝ Եղեգնաձորի մասնաճյուղերում:

Առկա ուսուցման բակալավրիատում դրական գնահատականով պաշտպանվել է 830 (98.8%) ավարտական աշխատանք, որից 475-ը (56.5%) արժանացել են «գերազանց», 182-ը (22.0%)՝ «լավ» գնահատականների: Նախորդ տարիների շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորման քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցել է 29 ուսանող, որից 26-ը (90.0%) գրանցել են դրական արդյունք: 283 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ (նախորդ տարվա 285-ի դիմաց):

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը գերազանցապես կազմակերպվել է ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունից 100% արդյունք արձանագրվել է 20 մասնագիտություններում: Ամենացածր առաջադիմությունը (91.3%) ցուցաբերել են «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» և «Կառավարում» մասնագիտությունների շրջանավարտները:

Հեռակա ուսուցման բակալավրիատում ավարտական աշխատանքների պաշտպանությանը թույլատրված 445 ուսանողից 419-ը (94.2%) ստացել են դրական, 11-ը՝ «անբավարար» գնահատականներ, իսկ 15-ը չեն ներկայացել: Պաշտպանության արդյունքում 59 ուսանող ստացել է «գերազանց» (նախորդ տարի՝ 22-ը), 80-ը՝ «լավ» գնահատականներ (նախորդ տարի՝ 28-ը):

Առկա ուսուցման մագիստրատուրայում պաշտպանության է ներկայացվել 264 թեզ (առաջադիմությունը կազմել է 97.0%), որից 109-ը (41.3%) արժանացել են «գերազանց», 69-ը (26.1%)՝ «լավ», 77-ը (29.2%)՝ «բավարար» գնահատականների: Նախորդ տարիների շրջանավարտներից մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել է 6 ուսանող, բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ: 38 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ (14.4%)՝ նախորդ տարվա 144-ի (32.8%) փոխարեն:

Խորհուրդը միաժամանակ նշում է, որ ինչպես ավարտական աշխատանքների, այնպես էլ մագիստրոսական թեզերի պաշտպանության կազմակերպման աշխատանքներում դեռևս կան թերություններ և լուծում պահանջող խնդիրներ:

Առանձնացնենք ավարտական աշխատանքներում ու մագիստրոսական թեզերում տեղ գտած ուշադրության արժանի թերությունները և բացթողումները.

1) Աշխատանքների մի մասում օգտագործված գրականության ցանկերը շատ աղքատիկ են: Որոշ աշխատանքներում հանդիպում են համացանցից կամ պետական մարմինների պաշտոնական կայքում տեղակայված փաստաթղթերից արտատպված նյութեր՝ առանց հղումների: Որոշ թեմաներ արդիական չեն: Շատ դեպքերում բացակայում են թեմայի շարադրանքի տրամաբանությունը:
2) Ինչպես ավարտական աշխատանքների, այնպես էլ մագիստրոսական թեզերի թեմաներում դեռևս նկատվում են ոչ միայն նախորդ տարիների թեմաների կրկնություններ, այլ տվյալ տարվա տարբեր ուսուցման ձևերում թեմաների կրկնություններ: Որոշ աշխատանքներում թեմայի վերնագիրը և շարադրանքը չեն համապատասխանում միմյանց:
3) Աշխատանքների մի մասում և հատկապես ավարտական աշխատանքներում բացակայում են քանակական, որակական վերլուծությունները, բավարար չեն տնտեսական, իրավիճակային գնահատումները: Սակավ են այն աշխատանքները, որտեղ վերլուծություններն իրականացվել են մաթեմատիկական ու վիճակագրական մեթոդների օգնությամբ: Չեն օգտագործվում համակարգչային փաթեթներ:
4) Կան դեպքեր, երբ մագիստրոսական թեզերն իրենց գիտական խորությամբ և ծավալով չեն տարբերվում ավարտական աշխատանքներից:
5) Կարծիքների և գրախոսությունների մի մասը չունի համապատասխան ձև, բովանդակություն, չի պարունակում հիմնավորված եզրահանգումներ, չի համապատասխանում սահմանված պահանջներին:
6) Նկատելի է որոշ հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների միօրինակությունը:
7) Կան ավարտական աշխատանքներ ու մագիստրոսական թեզեր, որոնք ներկայացված են բազմաթիվ լեզվաոճական և տեխնիկական սխալներով և առանց խմբագրման:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հանձնարարել դեկաններին և ամբիոնների վարիչներին՝**

1) ավարտական աշխատանքների և հեռակա ուսուցման մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի համար մինչև յուրաքանչյուր ուսումնական տարվա նոյեմբերը, իսկ առկա ուսուցման մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի համար մինչև յուրաքանչյուր ուսումնական տարվա մարտը ամբիոններում քննարկել, ֆակուլտետների խորհուրդների նիստերում հաստատել և ուսումնական բաժին ներկայացնել ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի արդիականացված թեմաների, կատարող ուսանողների և ղեկավարների ցանկը.
2) բացառել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ու շարադրանքների կրկնությունները.
3) խիստ կարևորել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների և անդամների ընտրության գործընթացը.
4) առավելագույնս ապահովել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի արտաքին գրախոսում.
5) ներկայացվող պահանջներին չհամապատասխանող կարծիքներ և գրախոսություններ ներկայացնողների հարցը դարձնել քննարկման առարկա:

2. Սույն որոշումը քննարկել բոլոր թողարկող ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Մ.Ն.Հարությունյանին և Պ.Ա.Քալանթարյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ Կ. Լ. Աթոյան

13.10.2017 թ.